

ԲԻՆԳՅՈՒԼԻ ԺԱՆՐԸ ԵՎ ԿՈՄԻՏԱՍԻ «ՄՇԵՑՈՑ ԲԻՆԳՅՈՒԼ»-Ը

ՄԱՐԻԱՆՆԱ ՏԻԳՐԱՆՅԱՆ*

Ինչպես Արարատ լեռը, Վանա ծովը, այնպես էլ Բինգյոլը, որպես կորուսյալ հայրենիքի սրբազան մաս՝ միշտ հուզել է հայ մարդուն. այն գովերգել են բոլոր ժամանակների գուսան-աշուղներն ու բանաստեղծները (Զիվանի, Շահեն, Ա. Իսահակյան, Հ. Շիրազ)։ Այդ «Բինգյոլ»-ների շարքում իր բացառիկ դերն ու արժեքն ունի Կոմիտասի ծայնագրած «Մշեցոց Բինգյոլ»-ը, որն իր բոլոր տվյալներով արժանի է դասվելու կոմիտասյան ֆուլկլորային խոշոր հայտնագործությունների շարքին։ Այն մեզ հասած նշված տարեթիվ ունեցող ամենավաղ գրառումն է (հոկտեմբերի 13, 1891 թ.), և ինչպես բնութագրում է Ռ. Աթայանը՝ նվագարանային բնույթի վոկալ իմպրովիզացիա է, որն աղեսներ ունի քնարական-էպիկական, վիպական, պանդխտության, ալագյոզլուների և աշուղական երգերի հետ։

«Բինգյոլ»-ը բնության գովք է, ուր հիշատակվում են մայր Արաքս գետը, պատմական Խարբերդը, որի ճամփան տանում է դեպի Բինգյոլի գուլալ աղբյուրները։ Հայոց լեռնաշխարհի Բարձր Հայքից են սկիզբ առնում աստվածաշնչյան չորս գետերը՝ Տիգրիսը, Եփրատը, Արաքսը, Ճորոխը և այստեղ է տեղադրվում դրախտային Եդեմը։ Արաքսի օրրանը Կարնո (Էրզրում) երկրի հարավային կողմում բարձրացող Բյուրակնյան լեռներն են, որտեղ ծյունի հաստ շերտերի հալոցքից գոյանում են անթիվ մանր լճակ-ակունքներ (այստեղից էլ Բյուրակն՝ «հազար ակունք» անվանումը), որը թուրքերեն փոխառությամբ դարձավ Բինգյոլ։ Հայոց աշխարհի սրտում գտնվող այս վայրը, որի շուրջ զանազան հավատալիքներ և ավանդապատումներ են հյուսվել՝ բոլոր ժամանակներում գովերգվել, պաշտամունքի է արժանացել և սրբացվել է։ Աշուղական արվեստում արևելյան ծայնակարգերին բնակատեղիների անվանումներ (Էնգելի, Իսֆահան, Շիրազ, Շուշտարի ևն) տալու տարածված երևույթը փոխառեցին նաև հայ աշուղները և որոշ ծայնակարգային և տաղաչափական բնորոշ առանձնահատկություններով չափածո դարձվածքներին տվեցին հայկական անվանումներ՝ շաքի (գյուղ Սյունյաց աշխարհում, որը հայտնի է համանուն գեղատեսիլ ջրվեժով), շարքի (բնակատեղի)։ Աշուղական երգարվեստում այդպիսի տաղաչափական դարձվածք էր նաև բինգյոլը։

Քանալի բառեր – Կոմիտաս, Բինգյոլ, «Մշեցոց Բինգյոլ», Նիկողայոս Տիգրանյան, աշուղ Զիվանի, գուսան Շահեն, ալագյոզլու։

Ներածություն

Հայ ժողովրդապրոֆեսիոնալ երաժշտության մեջ առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում «Բինգյոլ»-ները, որտեղ բացառիկ արժեք և նշանակություն ունի Կոմիտասի գրառած «Մշեցոց Բինգյոլ»-ը։ Դարեր շարունակ

* ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու, tigranyan.marianna@mail.ru, հոդվածի ներկայացման օրը՝ 11.02.2021, գրախոսման օրը՝ 17.03.2021, տպագրության ընդունման օրը՝ 24.03.2021:

նակ հայերը կորցրել և շարունակում են կորցնել իրենց պատմական հայրենիքը, որից մեկն էլ Բյուրակնյան լեռներ էին, ավելի հայտնի Բինգյոլ անվամբ: Ժողովրդական երգիչներն և բանաստեղծներն իրենց արվեստում շարունակ գովերգել են Մասիս լեռը, Վանա Ծովը, ինչպես նաև Բինգյոլը, որոնք այդպես էլ մնացին որպես անհաս երազ և հայրենի հողերի սրբազան մասնիկ:

Կոմիտասի «Մշեցոց Բինգյոլ»-ը

Հայկական ժողովրդական երգաստեղծության մեջ Կոմիտասի «Մշեցոց Բինգյոլ»-ը բացառիկ արժեք է ներկայացնում և իր բոլոր տվյալներով արժանի է դասվելու կոմիտասյան ֆուլկլորային խոշոր հայտնագործությունների շարքին: Այն մեզ հասած նշված թվական ունեցող ամենահին նմուշն է, որը թվագրված է 1891 թ. հոկտեմբերի 13-ով¹: Երգը հայտնաբերվել է Գևորգյան ճեմարանի ուսուցիչ, իսկ նախկինում սան՝ Հայկ Հովհաննիսյանի ձեռագիր երգարանում, թվագրված № 282-ով, որտեղ բացի «Մշեցոց Բինգյոլ»-ից կային նաև Կոմիտասի ուրիշ ծայնագրած երգեր և քառածայն խմբերգեր: Հայտնի է, որ Էջմիածնի հոգևոր ճեմարանի ուսանողները 1890-ական թվականներին կազմել էին երկու ձեռագիր երգարան. մեկը՝ վերը նշված «Հովհաննիսյանի երգարան»-ն էր², մյուսը՝ «Ազգային երգարան»-ը³, որն ինչպես և նախորդը՝ կազմվել է 1891-1895 թթ. ժամանակահատվածում: Պետք է շեշտել, որ երկու երգարանում էլ «Մշեցոց Բինգյոլ»-ը նույն ձեռագրով է արտագրված և ծանոթագրության մեջ նշված է. «Մշեցի Մուշեղից (ճեմարանի ծառա) ծայնագրեց Սողոմոն Սարկավազ Սողոմոնյանը 1891 թ. հոկտեմբերի 13-ին»⁴:

Ռ. Աթայանը նշում է. «Թեև երկու գրությունն էլ Կոմիտասի ձեռքով չեն, սակայն լիակատար հիմք կա դրանք ընդունելու որպես հեղինակային բնագրի արժեք ունեցող նյութ, կասկածից վեր է, որ հայկական ծայնանիշերով այդ բավական բարդ գրվածքը երկու դեպքում էլ Կոմիտասի ձեռագրից արտագրված է անմիջականորեն, բացառված չէ նաև՝ իր հսկողությամբ: Երկու օրինակը գրեթե նույնական են, և դրանց միջև զանազանությունները արտագրության ընթացքում նյութի բարդության հետևանքով գոյացած մանր տարբերություններն են»⁵:

«Մշեցոց Բինգյոլ»-ը Հայկ Հովհաննիսյանի տետրում հայտնաբերել, հայկական ծայնանիշերից փոխադրել և հրատարակել է Մուշեղ Աղայանը՝ Կոմիտասի «Ազգագրական ժողովածու»-ի երկրորդ հատորում. այն իր ոճա-

¹ Տե՛ս Կոմիտասական 1, Երևան, 1969, էջ 24:

² Ռ. Աթայանի մեկ տվյալի համաձայն Հ. Հովհաննիսյանի այդ ձեռագիր երգարանը գտնվում է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում (այսուհետ՝ ԳԱԹ)՝ Մուշեղ Աղայանի ֆոնդում (տե՛ս Կոմիտասական 1, էջ 24), իսկ մյուս տվյալի համաձայն՝ երաժշտագետ Արաքսի Սարյանի անձնական արխիվում (տե՛ս Կոմիտաս, ԵԺ, հ. 9, Երևան, 1999, էջ 132):

³ «Ազգային երգարան» նոտագրած ձեռագիր երգարանը պահվում է ԳԱԹ-ում՝ Սպիրիդոն Մելիքյանի անձնական արխիվում:

⁴ Տե՛ս Կոմիտաս, ԵԺ, հ. 9, էջ 135:

⁵ Նույն տեղում, էջ 42:

կան ու մեղեդային կառուցվածքով զգալիորեն տարբերվում էր ժողովածուի մյուս երգերից⁶: Մուշեղ Աղայանը և Ռոբերտ Աթայանը «Մշեցոց Բինգյոլ»-ի մեջ կարևորում են ժողովրդական մեղեդիների գրանցման կոմիտասյան այն եղանակը, որով հետագայում գրանցվեց Ակնա երգերի շարքը, որը մեզ հասել է միայն տպագրված վիճակում: Այդ երգերը երգել է ծագումով ակնեցի Հովսեփ Ճանիկյանը՝ «Հնությունք Ակնա» գրքի հեղինակը. 8-10 երգ Կոմիտասը ձայնագրել է դեռևս 1892 թ. Կ. Պոլսում, հետո 1893 թ. երեք երգ՝ ալագյոզներ⁷ ձայնագրել է Գրիգոր Մեհտերյանը⁸, մյուսները 1894 թ. Էջմիժնում ավելացրել է դարձյալ Կոմիտասը և ինքն էլ 1895 թ. ամբողջը խմբագրել է⁹: Նույն թվականի օգոստոսին Վաղարշապատում այդ երգերը հայկական ձայնանիշերով տպագրվել են 16 էջանոց փոքրիկ գրքուկով, որն էլ դարձավ «Հնությունք Ակնա» գրքի հավելվածը (ընդհանուր առմամբ 25 երգ)¹⁰:

Կոմիտասի հայտնաբերած և գրառած «Մշեցոց Բինգյոլ»-ը, որն, ըստ Ռ. Աթայանի, ավելի հարմար է անվանել «բալլադ» կամ «երգ-պոեմ»¹¹, նվագարանային բնույթի հանկարծաբանորեն զարգացող ոճի այն ստեղծագործություններից է, որը արևմտահայկական ժողովրդական երգաստեղծության մեջ իր ձևային և ոճական կառուցվածքով մի առանձին տեսակ է և սերտորեն առնչվում է «**ալագյոզլու**»¹² կոչվող ծորուն երգերին: Հայ երաժշտական բանահյուսության մեջ թուրքերենից փոխառնված այդ «alagözün» անվանմամբ երգերը կատարել են միայն արևմտահայերը: Բացի Կոմիտասի «Ակնա շար»-ի ալագյոզլուներից հայտնի են նաև Միհրան Թումաճանի Բուֆանիայի շրջանը ներկայացնող հարսանեկան ալագյոզլուների գեղեցիկ մի փնջի գրառումներ¹³, ինչպես նաև Ակնա երգ՝ «Դուռ դրացի եկան» պանդխտության ալագյոզլուի մեկ արժեքավոր օրինակ¹⁴:

Ալագյոզլուները տարբերվում են ինչպես բանաստեղծության ինքնորոշ հատկություններով, այնպես էլ հետաքրքրական եղանակներով, որի վերաբերյալ Մ. Թումաճանն իրավացիորեն նշել է. «...ալագյոզլուների թե՛ տաղա-

⁶ Տե՛ս Կոմիտաս, Աժ, հ. 2, կազմ.՝ Մ. Աղայան, խմբ.՝ Բ. Քուշնարյան, Երևան, 1950, № 38, էջ 46-47:

⁷ Խոսքը Ալագյոզների երեք տարբերակի մասին է (Աբուլեխ գյուղի եղանակով, Ձորակ գյուղի եղանակով և Թուփսմանուկի եղանակով), որոնք ներկայացված են մեկ համարի տակ (№ 12), երգ Ղարիբի՝ (№ 13) և երգ Համբարձման (№ 14) (տե՛ս Կոմիտաս, Եժ, հ. 3, № 62, 63, 64):

⁸ Գ. Մեհտերյանը Կ. Պոլսում Գում Գափու հայաբնակ թաղամասում գտնվող Սուրբ Աստվածածին մայր եկեղեցու դպրապետն էր: Թաղամասում, բացի մայր եկեղեցուց, ևս երկու հայկական եկեղեցի կար՝ Սուրբ Որդվոց Որոտմանը և Սուրբ Խաչը:

⁹ Տե՛ս **Ճանիկյան Յ.**, Հնությունք Ակնայ, 1895, Թիֆլիս (գրքի վերջում կցուած է՝ Շար Ակնայ ժողովրդական երգերի, ձայնագրեց Կոմիտաս Վարդապետ, Սբ. Էջմիժին, 1895), Ծանոթութիւնք, էջ 540-541:

¹⁰ Տե՛ս **Աթայան Ռ.**, Կոմիտասի երաժշտական-ազգագրական ժառանգությունը, «Պատմա-բանասիրական հանդես», 1969, № 2, էջ 44-45:

¹¹ Տե՛ս Կոմիտաս, Եժ, հ. 9, էջ 136:

¹² Հանդիպում է տարբեր գրությամբ՝ ալագյոզլի, ալակյոզլու, ալակեզլի ևն:

¹³ Տե՛ս **Թումաճան Մ.**, Հայրենի երգ ու բան, հ. 1, Երևան, 1972, № 4-10, էջ 45-55:

¹⁴ Տե՛ս **Թումաճան Մ.**, Հայրենի երգ ու բան, հ. 2, Երևան, 1983, № 53, էջ 88:

չափական, թե՛ եղանակային կառուցվածքին հատուկ է մի որոշ կաղապար, որ երկար դարերի ընթացքում առանց մեծ աղարտումի հասել է մինչև մեր օրերը, կարելի է առայժմ այդ երգերը ևս անցյալի հայ ժողովրդական երգերի (բանաստեղծության և եղանակի) մի որոշակի տեսակ են ներկայացրել (և թերևս հայերեն մի ընդհանուր անուն էլ ունեցել են), ինչպես անտունիներն են, մանիները կամ ջանգյուլումները և այլն»¹⁵:

Ռ. Աթայանը շատ դիպուկ է բնորոշել, որ «Մշեցոց Բինգյոլ»-ը «երաժշտա-ձևային մի առանձին ժանր է կազմում»¹⁶, քանզի մեկ ժանրի սահմաններում անհնար է այն դիտարկել: «Մշեցոց Բինգյոլ»-ում միահյուսված են տարբեր ժանրերին բնորոշ կառուցվածքային, մետրական, ելևէջային, տաղաչափական առանձնահատկություններ. այն աղերսվում է ինչպես քնարական-էպիկական, վիպական, պանդխտության, երգերի, այնպես էլ ժողովրդա-պրոֆեսիոնալ՝ աշուղական երգերի հետ:

«Ալագյոզլու» կոչվող երգերը, որքան էլ այսօր քիչ են հայտնաբերված և գրառված՝ ուսումնասիրման կարիք ունեն: Դրանց մի մասը մեզ հասել է հայերեն, մյուս մասը՝ թուրքերեն: Արևմտյան Հայաստանի որոշ շրջանների հայերը, որոնք հարկադրաբար թրքախոս էին դարձել, իրենց «դարդոտ» երգերը հիմնականում թուրքերեն էին երգում: Որպես կանոն՝ գեղջկական քնարական երգերի, ինչպես նաև ալագյոզլուների ընդհանրական լարը տառապանքն է՝ ցավն ու վիշտը, սերն ու կարոտը, պանդխտության մեկնելու և իրարից բաժանվելու կսկիծը: «Մշեցոց Բինգյոլ»-ի ամբողջ տեքստը Գևորգյան ճեմարանի ծառա՝ մշեցի Մուշեղը երգել է թուրքերեն. երգի առաջին իսկ հրատարակման ժամանակ ներկայացվել է տեքստի հայերեն թարգմանությունը¹⁷.

Ա. Խարբուրդ յոլի վուրդում, գելդիմ
Բինգյոլ-սույի նարդան աքար.
Արագ սույի բող-բուլաղա գյալեիմ.
Չայիր-չիման Սավուղ սուլար
Բինգյոլի:

Բ. Ղառլի դաղլար աշար-աշար,
Նուրա գյալդըմ Բինգյոլ դաղընա.
Ալվան-ալվան գառլի դաղլար
գյալեիմ
Աշար յոլի Բինգյոլի¹⁸:

Ա. Խարբերդի ճամփան գարկեցի, եկա
Բինգյոլի ջուրը, որտեղից նա բխում է,
Արագի ջուրը պղտորված գալիս է
Չայիր-չիման, սառնորակ ջրերը
Բինգյոլի:

Բ. Ձյունապատ լեռների վրայով անցնելով,
անցնելով,
Եկա այստեղ՝ Բինգյոլ սարը.
Բազմերանգ ծաղիկներ, վարդեր
Բացում են Բինգյոլի ճանապարհը:
Ալվան-ալվան սառցապատ լեռներն են
եկել...

¹⁵ Տե՛ս Թումանյան Մ., Հայրենի երգ ու բան, հ. 1, էջ 199:

¹⁶ Կոմիտաս, ԵԺ, հ. 9, էջ 42:

¹⁷ Կոմիտաս, Ազգագրական ժողովածու, հ. 2, № 38, 1950, էջ 46-48:

¹⁸ Նույն տեղում, էջ 126:

ՄՇԵՑՈՑ ԲԻՆԳՅՈԼԸ

Ծանր. Largo

մեղմ p *ոչ դանդաղ* *նվազեցնելով decrescendo* 14

Խար-բուրդ յո - լի
Խար-բեր - դի ճամ - - - փան,

զվարթ

փուր - դում գել - դիմ
գար - կն - ցի և - - - - - կա,

նվազեցնելով decrescendo 18

Բին-գյոլ սու - ի
Բին-գյո - լի ջուր

հառաչանքով և շտապ *aspirazione* *հագագ*

խար - դան ա - - - բար.
գյո - լալ աղ - - - քյուր

հանդարտ *մեղմ p* *խույ*

Ա - թագ սու - ի բող բու - լա - դու գա - յն - - - իմ,
Ա - թագ գն - տի ա - կուեր - են - ըից գա - լիս եմ,

խույ *բաց բերան*

հանգիստ

չա - յիր, չի - ման սա-վուդ սու - լար
ու խո - տն - ըր, պաղ ջր - ըն - ըր

կ. ուժ. mf *նվազելով morendo* 14

Բին - գյո - լի,

մեղմ p

Բին - - - գյո - լի, չա - յիր չի - ման
ու խո - տն - ըր,

բարձր

սա - վուդ սու - լար
ալ - վան ծա - դիկ - - - - - ենքր

հեռահեռ զվարթ *կ. ուժ. mf* *նվազեցնելով* 14

Բին - գյո - լի,

մեղմ p

Բին - գյո - լի:

«Մշեցոց Բինգյոլ»-ը բնության գովք է, ուր հիշատակվում են մայր գետը՝ Արաքսը (երգում՝ Araz), պատմական Խարբերդը¹⁹, որի ճամփան տանում է դեպի Բինգյոլի զուլալ ջրերն ու Բինգյոլի սարը, երփներանգ ծաղիկներով զարդարված հայոց լեռնալանջերը ևն....:

Բինգյոլի աշխարհագրությունը

Մեծ Հայքի տասնհինգ երկրամասերից առաջինը Բարձր Հայքն է՝ Կարնո երկիրը, որի մասին Շիրակացին գրել է. «Այս երկրամասը իրապես ցույց է տալիս իր իսկ անունը, բարձր է ոչ միայն Մեծ Հայքի մնացած մասերից, այլև ողջ աշխարհից, այդ պատճառով էլ նրան աշխարհի լեռնագագաթ են կոչել: Նա գետեր է արձակում աշխարհի չորս կողմեր»²⁰: Բարձր Հայքից են սկիզբ առնում չորս խոշոր գետերը՝ Եփրատը, Տիգրիսը, Արաքսն ու Ճորոխը: Աստվածաշնչում Եդեմի պարտեզի նկարագրումը հետևյալն է. «Եվ Տեր Աստված երկրից բուսցրեց բոլոր տեսակի ծառերը՝ աչքին հաճելի և ուտելու համար քաղցր, նաև պարտեզի մեջտեղում Կենաց ծառը, և բարին ու չարը գիտենալու ծառը: Եվ մի գետ էր դուրս գալիս Եդեմից պարտեզը ջրելու համար և այնտեղից բաժանվում ու չորս ճյուղ էր դառնում» (Գիրք Ծննդոց, II: 9-10):

Չորս ճյուղերից մեկը Արաքսն է՝ «ամենահայկական գետը», որը ջուր է մատակարարել Մեծ Հայքի Այրարատ, Սյունիք, Արցախ, Վասպուրական նահանգներին և հաճախ կոչվել է Մայր Արաքս: Միջնադարյան վրացական աղբյուրներում անվանվել է Արասխի կամ Արեգ, իսկ թուրքական աղբյուրներում՝ Արագ²¹: Ըստ IX-X դդ. աշխարհագետ Իբն ալ-Ֆակիհի՝ արաբներն այն կոչել են Արրասս. իր «Կիթաբ ալ-բուլդան» («Երկրների գիրք») աշխատության մեջ հեղինակը գրում է, որ միայն Արաքսի գետահովտում իր ժամանակ եղել է մոտ 1000 քաղաք և գյուղ²²: Արաքսը՝ որպես հայոց գետ, հիշատակել են դեռևս Հերոդոտեսը, Մետրոդորոս Սկեպսացին, Ստրաբոնը, Վիրգիլիոսը, Պլուտարքոսը: Արաքսը գովերգել են գրողներն ու բանաստեղծները²³, մայր-գետի հետ են կապված ժողովրդական շատ զրույցներ, ավանդու-

¹⁹ Խարբերդն Արևմտյան Հայաստանի խոշոր քաղաքներից էր, որը բոլոր ժամանակներում պահպանել է ճանապարհների հանգույցի դերը: «Խարբերդ» անվան ստուգաբանությունը կապում են այդ տարածքում Ք.Մ. 2000 տարի առաջ եղած Խար գյուղի հետ, որին ավելի ուշ ավելացել է «բերդ» արմատը, որն էլ նշանակել է «բերդի ճանապարհ»: Խեթական սեպագրերի համաձայն Խարբերդը եղել է Խատի աստվածուհու մեհենական սրբավայրը (տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան (այսուհետ՝ ՀՀՇՏԲ), հ. 2, Երևան, 1988, էջ 697-700):

²⁰ Անանիա Շիրակացի, Մատենագիտություն, V. Աշխարի հայոց, թարգմ.՝ Է. Աղայան, Ռ. Սարգսյան, Երևան, 1979, էջ 291:

²¹ Տե՛ս ՀՀ ՇՏԲ, հ. 1, Երևան, 1986, էջ 538:

²² Պողոսյան Ա., Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 1, Երևան, 1974, էջ 703:

²³ Հայ արձակում Արաքսի գեղարվեստական նկարագրին անդրադարձել է Րաֆֆին՝ «Սամվել» վեպի «Արաքսի որոգայթները» գլխում: Հայ քնարերգության գոհարներից է Ռաֆայել Պատկանյանի «Արաքսի արտասունքը» բանաստեղծությունը, որը տպագրվել է 1856 թ.: Հետագայում կոմպոզիտոր Պետրոս Աֆրիկյանը գրել է երաժշտություն և «Մայր Արաքսի ափերով» երգը դարձել է հայկական սիրված երգերից մեկը:

թյուններ²⁴, ինչպես նաև գեղջկական և աշուղական շատ երգեր, որից մեկն էլ Կոմիտասի գրառած «Մշեցոց Բինգյոլ»-ն է:

Արաքսի օրրանը Էրզրումի հարավային կողմում բարձրացած Բյուրակնյան լեռներն են²⁵ ժողովրդի մեջ հայտնի Բինգյոլ անվամբ: Բյուրակնյան լեռները ջրբաժան են Արաքսի և Արածանիի միջև, որտեղից սկիզբ են առնում այս երկու գետերի ակունքներն ու վտակները: Վիթխարի ժայռերից կազմված այդ բարձրավանդակի վրա, ամառվա ամենատաք ժամանակ անգամ, ձյունի հաստ շերտեր են մնում, որոնց հալոցքից անթիվ մանր լճակներ են գոյանում՝ բյուրավոր ակունքներ. այստեղից էլ՝ Բյուրակն անվանումը, որը թուրքերեն դարձել է Բինգյոլ (հազար լիճ): Այդ լճերից բխում են լեռնային մանր և չափազանց սառնորակ առվակներ: Բյուրակնյան լեռները մի կենտրոն է, որը ջուր է բաժանում զանազան ուղղություններով. հյուսիսային լանջերից իջնում է Արաքսը, որը թափվում է Կասպից ծով, իսկ հարավային և արևմտյան լանջերի ջրերը թափվում են Արածանին՝ Արևելյան Եփրատը [Ֆրատ], որի վերջին հանգրվանը Հնդկական օվկիանոսն է²⁶:

Բյուրավոր ակունքների այս բարձրադիր հայրենիքը՝ Բարձր Հայքը, Պատմական Հայաստանի ամենագեղեցիկ անկյուններից մեկն է, որի մաքրամաքուր սառնորակ աղբյուրներն անհիշելի ժամանակներից պաշտամունքային վայր են եղել: Ահա թե ինչպես է նկարագրել Բինգյոլը թուրքական գաղտնի գործակալության փոխգնդապետ Շտրեկերը. «Աննման է լեռնային օդը, որ տոգորված է բյուրալի ծաղիկների անուշահոտությամբ: Չնայած բարձրության, լեռներն ունեն ցուրտ քամիներից լավ պաշտպանված լանջեր, ուր օդը բարեխառն է, ամառը նույնիսկ տաք: Եվ այս կողմի հայ ժողովուրդը այստեղ էլ, ինչպես Արածանիի վերին ակունքների վրա, գետեղում է դրախտը: Անկախ Աստվածաշնչի ավանդույթից, որ եկել է նվիրագործելու հայկական մեծ գետի ծնունդը, բյուրավոր աղբյուրների և լանջերի այս բնագավառը պիտի զարգացներ ջրերի սրբազան պաշտամունքը, որն առհասարակ հատուկ է հայ ժողովրդին: Հավատում են այստեղի և ոչ քրիստոնյա բնակիչները, թե այս լճակների մեջ կա մեկը, որ իսկապես անմահական ջուր ունի և անմահություն կտա այն մարդուն, որ երջանկություն կունենա նրա ջրից խմելու: Սակայն դժբախտությունն այն է, որ ոչ ոք դեռ չի գտել այդ լճակը, ուստի և ոչ ոք անմահ չէ: Բայց առանց այդ հրաշագործ լճակի էլ մարդկային կյանքն այս դրախտանման վայրում առողջ ու երկարատև լինելու բոլոր հնարավորություններն ունի»²⁷:

Տվյալների համաձայն, ներքին Տավրոսի լեռնաշղթայի Սերմանց կամ Բյուրակնյան լեռները, դեռևս խորը անցյալում կարևորագույն ծիսա-պաշտամունքային վայր է հանդիսացել. 7500 տարի առաջ ձմեռային արևադարձի ժամանակ դեկտեմբերի 21-25-ին արևն առավոտյան «ծնվում-եղնում» էր

²⁴ **Ղանալանյան Ա.**, Ավանդապատում, Երևան, 1967, էջ 87:

²⁵ Բյուրակնյան լեռները հիշատակվում են նաև որպես Սերմանց լեռներ՝ Բյուրակնյան բարձրավանդակի հյուսիս-արևմուտքում ամենաբարձր լեռնագագաթ՝ Սերմանց լեռան անունով (3280 մ):

²⁶ Տե՛ս **Радде Г.** Бин-гёль, гора тысячи озер, область истоков Аракса, Известия Кавказского отдела Императорского Русского географического общества, т. V, Тифлис, 1877-1878.

²⁷ **Штреккер В.** Очерки Верхней Армении, Тифлис, 1873, стр. 29.

Ջրհոսի համաստեղությունից, որը հենց այդ ժամանակ կանգնում էր Տիգրիս և Եփրատ գետերի ակունքների մոտ տարածքի վրա²⁸: Հայ ժողովուրդն այս տարածաշրջանում է գետեղել դրախտը և պատահական չէ, որ այդ պաշտամունքը փոխանցվել է հաջորդ սերունդներին և շարունակվել քրիստոնեական դարերում: Ավանդության համաձայն՝ Բյուզանդիայի Հերակլես կայսրը քրիստոնեական մի հսկա բանակով, հարձակվելով պարսիկների վրա և գերությունից փրկելով վերջիններիս կողմից հափշտակած Քրիստոսի Խաչափայտը՝ վերադարձրել է այն Երուսաղեմ (628 թ.)²⁹: Կայսերը ռազմական օժանդակություն է ցուցաբերել նաև հունական բանակին աջակցող հայոց զորամասը՝ ՄԺԺԺ Գնունու գլխավորությամբ: Մինչ Երուսաղեմ հասնելը Խաչն անցել է Պատմական Հայաստանով՝ Կարին (Էրզրում) և Բյուրակնյան լեռներով: Ճանապարհին, ինչ-որ վտանգի պատճառով, Խաչափայտը ստիպված թողել են հողի մեջ, իսկ երբ նորից հանել են, ապա այդ տեղից աղբյուր է բխել: Բյուրակնյան լեռան այդ կողմը կոչվում է Խաչափայտ, իսկ մոտակայքում շինված վանքը՝ Խաչավանք (Խաչկավանք)³⁰: Լողանալ հրաշալի աղբյուրի սառույց ջրի մեջ կարող են միայն այն երջանիկները, որոնք ոչ մի մեղք չունեն, իսկ լվացվել այդ անմահական ջրերով՝ նշանակում է բժշկվել մարմնի և հոգու արատներից³¹: Այդպիսի հավատալիքներով է հայ ժողովուրդը մեծարել համաշխարհային համբավ ստացած իր Ամենայն Հայոց գետ՝ Մայր Արաքսի ակունքները:

Ահա թե ինչպիսի պատմամշակութային և կրոնա-ծիսական նշանակություն են ունեցել Բյուրակնյան լեռները հայ մարդու պատկերացումներում: Առհասարակ՝ լեռների, սարերի, ինչպես և քարայրների ու քարանձավների պաշտամունքը հայոց մեջ շատ խոր արմատներ ունի, որը գալիս է դեռևս հոգեպաշտության՝ անիմիզմի ժամանակներից: Հայոց լեռնաշխարհի գրեթե բոլոր լեռնային գագաթների և բարձունքների վերաբերյալ հյուսվել են հավատալիքներ, ավանդազրույցներ և առասպելներ. հիշենք Մասիսը, Արագածը (Ալագյազ), Նեմրուփը (Նեմրուդ), Առնոսը, Սիփանը, Գրգուռը (գոռացող), Արտոսը (արտասվող), Լեզքը (այստեղ է Շամիրամը դրել Արա Գեղեցիկի դին, որպեսզի արալեզները լիզեն նրա վերքերը՝ վերակենդանացնեն), Արագածի Ագռավասարը, Վանի «Ագռավու քարը» («Մհերի դուռը»), Արճեշի «Քաջանց կայանը», Մոկսի «Արծվաքարը» ևն³²: Բինգյոլի պարագայում քարի և ջրի պաշտամունքները սերտաճած են և «Բինգյոլ» անվանումը՝ «Հազար ակունք»,

²⁸ Արթուր Արմին, Հնագույն հեթանոսական աստվածաշունչ՝ «Սասնա Ծռեր էպոսը», «Սփյուռք», Լոս-Անջելես, 2007, էջ 251:

²⁹ Ամբողջ քրիստոնեական աշխարհն այդ օրը նշում է որպես Խաչվերացի տոն, որի խորհուրդն է՝ հարությամբ նորոգվելը: Խաչվերացը (խաչը վեր հանել, բարձրացնել) Հայ Առաքելական եկեղեցու հինգ Տաղավար տոներից վերջինն է, որը նշվում է կիրակի՝ սեպտեմբերի 11-17-ն ընկած ժամանակահատվածում. տե՛ս **Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան**, Ծիսական բառարան, Կաթողիկոսութիւն Մեծի Տանն Կիլիկո, Անթիլիաս, 1979, էջ 36:

³⁰ Տե՛ս ՀՀՇՏԲ, հ. 2, Երևան, 1988, էջ 673:

³¹ Տե՛ս Լեո, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1966, էջ 128-129:

³² Տե՛ս Սամուելյան Խ., Հին Հայաստանի կուլտուրան, հ. 1, Յերևան, 1931, էջ 306-322:

«Բյուր ակն» վերաբերում է ինչպես սարին, այնպես էլ ջրին (լճերին): «Մշեցոց Բինգյոլ»-ում դա շատ ցայտուն է դրսևորվում. առաջին քառյակում հիշատակվում է «Բինգյոլ-սուին» (Բինգյոլի ջուրը, ակունքը), իսկ երկրորդում՝ «Բինգյոլ դաղնա» (Բինգյոլ սարը): Հայոց աշխարհի սրտում գտնվող այս վայրը, որի շուրջ զանազան հավատալիքներ և ավանդապատումներ են հյուսվել՝ բոլոր ժամանակներում գովերգվել, պաշտամունքի է արժանացել և սրբացվել: Այս գովքն այնքան հաստատուն և կայուն է եղել, որ ժամանակի ընթացքում գոյացել է հատուկ ձև՝ ինքնատիպ կերտվածքով կառույց, որն էլ անվանել են «բինգյոլ»: Կոմիտասի «Մշեցոց Բինգյոլ»-ը ժանրային առումով հենց այդպիսի բինգյոլներից է՝ ժողովրդական-աշուղական երաժշտության ինքնատիպ տեսակ:

«Բինգյոլ»-ն աշուղական արվեստում

Կոմիտասի «Մշեցոց Բինգյոլ»-ից զատ, ուշագրավ են նաև աշուղ Զիվանու և Նիկողայոս Տիգրանյանի «Բինգյոլ»-ները:

ԲԻՆԳՅՈԼԻ («Հայրենիք»)

Զիվանի

Զափավոր

Երբ որ լի - նի գար - նա - նա - մուտ
 նոր գա - րուն, նոր գա - րուն, ա - վաղ,
 կը - բազ - մա - նան վը - տակ - նև - բող,
 հայ - ըն - նիր, շա - ըն շար, ցըն - ծու - թյամբ,
 վոյ, վոյ, վոյ, վոյ, վոյ, վոյ, վոյ, վոյ, վոյ, վոյ,
 եր - գով գը - վար - թուն, շար - ժը - վում են բա - նակ - նև -
 բող, հայ - ըն - նիր, ախ:

Աշուղ Զիվանու «Բինգյոլի»-ն XIX դ. 70-ականներին ծայնագրել է անվանի ֆոլկլորագետ-բանահավաք Արշակ Բրուտյանը և սկզբնատողի վերնագրով՝ «Երբ որ լինի գարնանամուտ» ընդգրկել իր 1895 թ. լույս տեսած «Ռամկական մրմունջներ» ժողովածուի մեջ (N^o 18)³³: Նշենք, որ երգը Ա. Բրուտյանի վաղ գրառումներից է և այս կամ այն տարբերակով զետեղվել է բանահավաքի ժողովածուի բոլոր հրատարակություններում³⁴, նույնիսկ՝ Գևորգյան ճեմա-

³³ Տե՛ս Բրուտյան Ա., Ռամկական մրմունջներ, հ. 2, Երևան, 2002, էջ 167:

³⁴ Հիշեցնենք, որ Ա. Բրուտյանի «Ռամկական մրմունջներ»-ը պարբերաբար թարմացվելով, մի քանի անգամ վերահրատարակվել է (1895, 1898, 1901 և 1904 թթ.) (տե՛ս Բրուտյան Ա., Ռամկական մրմունջներ, հ. 1, Երևան, 1985, էջ 10):

րանում նրա ուսանած տարիների հավաքածուում (1878 թ.), որը բացառությամբ մի քանի երգերի՝ կազմված էր հայրենասիրական երգերից: Ուշագրավ է, որ Զիվանին երգը վերնագրել է «Բինգյոլի», իսկ ենթավերնագրում նշել է «Հայրենիք», մինչդեռ բանաստեղծական տեքստում «Բինգյոլ» բառն արիասարակ չկա³⁵: Դա հաստատում է վերը նշված մեր դիտողությունն առ այն, որ «Բինգյոլ»-ը հատուկ կերտվածքով ինքնատիպ երաժշտական կառույց է: Կոմիտասի «Աշեցոց Բինգյոլ»-ի և Զիվանու «Բինգյոլի»-ի («Երբ որ լինի գարնանամուտ») միջև ընդհանրությունները նկատելի են. համընկնում են ձայնակարգային կարևոր հենակետերը, մեղեդիների զարգացման նույնանման սկզբունքներն ու լադային առանձնահատկությունները՝ կվարտային օժանդակ հենակետով դորիական լադի ցածր V աստիճանը՝ des.



Բացի Զիվանու «Բինգյոլի»-ից («Երբ որ լինի գարնանամուտ»), Ա. Բրուսյանը գրառել է նաև XVIII դ. բանաստեղծ, երգահան Պետրոս Ղափանցու գրչին պատկանող «Բինգյոլի»-ի ձևի մեջ ևս երկու երգ (Ա և Բ տարբերակներ)՝ «Առավոտյան քաղցր և անուշ հովերն» վերնագրով³⁶.

ԱՌԱՎՈՏՅԱՆ ՔԱՂՑՐ ՈՒ ԱՆՈՒՇ ՀՈՎԵՐՆՆ (Բ ՏԱՐԲԵՐԱԿ) /Բինգյոլի/

Չափավոր

Պ. Ղափանցու երկու «Բինգյոլի»-ները, որոնք նույն բանաստեղծական

³⁵ Բրուսյան Ա., Ռամկական մրմունջներ, հ. 2, №14, էջ 38:

³⁶ Նույն տեղում, էջ 39-40:

տեքստն ունեն, բայց տարբեր մեղեդիական կառույց³⁷ ենթադրել է տալիս, որ նման բանաստեղծական չափածո տեքստեր, այլևայլ տարբերակներով, տարածված են եղել միջնադարյան քնարերգության, ինչպես և ժողովրդական պոեզիան³⁸՝ աշուղական երգարվեստում: Ահա Ղափանցու նշված երգի առաջին տունը.

*Առաւօտեան քաղցր և անոյշ հովերըն,
Մերձեալ հընչեն մեղմով թըփոցդ քովերըն,
Այդ ծածանին աչացս լըցեալ ծովերըն.
Բացվի՛ր, բացվի՛ր, իմ կարմիր վարդ աննըման,
Գեղըդ նըման արեգական վառ վառման*³⁸:

Այս երգի վերաբերյալ Ասատուր Մնացականյանը գրում է, որ այն «ոչ թե անհատական (նկատի ունի հեղինակային-Մ.Տ.), այլ ժողովրդական երգ է»³⁹: Ի դեպ՝ Պ. Ղափանցու «Առավոտյան քաղցր և անուշ հովերն» բինգյուլի-երգի մեղեդին (Ա տարբերակ) որոշ ձևափոխումներով հանդիպում է նաև Զիվանու «Իմ ազգ» երգում, որի տաղաչափական ձևը նշված է իբրև «իին դյուբեիթ»⁴⁰: Այս նույն մեղեդու մեկ այլ տարբերակ հանդիպում ենք Նիկողայոս Տիգրանյանի գրառված «Բինգյուլ»-ում, որի «Էրգրումի ռոմանս» ենթավերնագրում նշմարվում է երգի ծննդավայրը՝ Կարին-Էրզրումը⁴¹:

ԲԻՆԳՅՈՒԼ

(«Էրգրումի ռոմանս»)

Գրառում՝ Ն. Տիգրանյանի



³⁷ Պ. Ղափանցու «Բինգյուլի»-ի «Ա» տարբերակը տե՛ս **Բրուտյան Ա.**, Ռամկական մրմունջներ, հ. 2, №14, էջ 38-39:

³⁸ **Ղափանցի Պ.**, Գրքյոյ, կոչեցեալ երգարան, Կ. Պոլիս, 1772, էջ 43 (ամբողջը՝ էջ 43-54):

³⁹ **Մնացականյան Ա.**, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956, էջ 502:

⁴⁰ **Բրուտյան Ա.**, Ռամկական մրմունջներ, հ. 2, №1, էջ 18:

⁴¹ **Տիգրանյան Ն.**, Դաշնամուրի համար դաշնակումներ, Ս. Պետերբուրգ, 1900:

Նախորդ «Բինգյոլ»-ների հետ համեմատելով՝ Ն. Տիգրանյանի օրինակում «ց» վերջնաձայնի փոխարեն տոնիկան «ա»-ն է: Աթայանն իրավացիորեն նշում է. «Այս դեպքում ևս ձայնակարգային կարևոր հենակետերը և առավել բնորոշ ելևէջները հիմնականում համընկնում են, բայց Կոմիտասի և Ջիվանու տարբերակների համեմատությամբ եղանակն անսպասելիորեն ավարտվում է լոկրիական հիմնաձայնով, և դա զգալիորեն փոխում է ամբողջության գունավորումը...»⁴²:

Ներկայացված աշուղական այս «Բինգյոլի»-ների բանաստեղծական տաղաչափության մեջ նշմարվում է մեկ ընդհանրություն՝ 11 վանկանի ոտանավորը.

Բինգյոլի («Երբ որ լինի գարնանամուտ»՝ Ջիվանի)

- | | |
|-------------------------------------|------|
| Երբ որ լինի գարնանամուտ նոր գարուն, | (11) |
| Կբազմանան վտակներդ հայրենիք, | (11) |
| Շարե շար ցնծությամբ երգով զվարթուն | (11) |
| Շարժվում են բանակներդ, հայրենիք: | (11) |

Բինգյոլի («Առավոտյան քաղցր և անուշ հովերը»՝ Պ. Ղափանցի)

- | | |
|---|------|
| Առավոտյան քաղցր և անուշ հովերն, | (11) |
| Մերձյալ հնչեն մեղմով թփույդ քովերն, | (11) |
| Արդ ծածանին աչացս լցյալ ծովերն. | (11) |
| Բացվի՛ր, բացվի՛ր, իմ կարմիր վարդ պատվական | (11) |
| Տեղդ նման արեգական վառվառման: | (11) |

Աշուղական արվեստում 11-վանկանի ոտանավորն առավել սիրվածն է, և թեև այդ տաղաչափությամբ շարադրանքն ունի մի քանի տեսակ՝ «դոշմա», «դաստան», «շարքի», «յեղաքլամա», «շաքի», այնուամենայնիվ՝ հիմնական տարբերությունը դիժմական անդամների և բառական ոտքերի կազմության մեջ է. 4+4+3, 4+3+4, 3+4+4 կամ՝ 6+5, 5+6: Կարծում ենք, որ աշուղական արվեստում «բինգյոլի» կոչված տաղաչափական ձևը հանգավորման տեսակ է, ինչպիսին են 5-վանկանի «բայաթավուր»-ը, 7-վանկանի «բայաթի»-ն, 8-վանկանի «դյուբեթիթ»-ը, 10-վանկանի «գյաֆ»-ը, 14-վանկանի «մուխամմազ»-ն ու «մյուշտազատ»-ը, կամ ինչպես մեր պարագայում՝ 11-վանկանի «դաստան»-ն ու «շաքի»-ն:

Ինչպես հայտնի է, արևելյան աշուղական արվեստում տարածված մի շարք ձայնակարգեր կրում են բնակավայրերի տեղանուններ՝ «Իսֆահան» «Շիրազ», «Շուշտարի», «Իրաք», «Էնզելի», «Ջաբուլ» ևն: Այս ավանդույթը փոխառելով, հայ աշուղներն իրենց տաղաչափական և ձայնակարգային կառուցվածքին համաձայն՝ ստեղծել են չափածո դարձվածների տեսակներ, որոնց տվել են հայեցի անվանումներ: Այդպես՝ «շաքի»-ն ծագում է Սյունյաց աշխարհի Շաքի գյուղի անվանումից, որը հայտնի է իր հորդառատ և սառնորակ աղբյուրներով և նույնանուն Շաքի գեղատեսիլ ջրվեժով⁴³, ինչպես 11-

⁴² Տե՛ս Կոմիտաս, ԵԺ, հ. 9, էջ 139:

⁴³ Տե՛ս ՀՀՇՏԲ, հ. 4, Երևան, 1998, էջ 93:

վանկանի «շարքի»-ն, որը նույնպես բնակատեղի անվանում է⁴⁴: Հնարավոր է, որ այս բնակավայրերն անցյալում ունեցել են աշուղական արվեստի լավ վարպետներ, կամ էլ՝ որպես բնության գեղատեսիլ վայր (ինչպես Բինգյոլը), գովերգվել են աշուղների կողմից, հետզհետե վերածվելով բանաստեղծական որոշակի կառույցի, ինչպիսին է ստորև դիտարկվող 11-վանկանի «բինգյոլ»-ը:

Կոմիտասի «Մշեցոց Բինգյոլ»-ի բանաստեղծական տեքստի կայուն տաղաչափության մասին խոսելը դժվար է, քանզի թուրքերեն տեքստում գերիշխում է 8-վանկանի ոտանավորը, իսկ հայերեն թարգմանությունն ազատ է և չափաժողովորում չկա:

Խարբուրդ յոյի վուրդում գելդիմ (8)	Ղարլի դաղլար աշար աշար (8)
<i>Խարբերդի ճամփան զարկեցի եկա</i>	<i>Ձյունապար լեռների վրայով անցնելով</i>
Բինգյոլ-սուի նարդար աքար. (8)	Բուրա գյալըն Բինգյոլ դաղնա, (8)
<i>Բինգյոլի ջուրը, որտեղից նա բխում է:</i>	<i>Այստեղ՝ Բինգյոլ սարն եմ եկել</i>
Արագ-սուի բող-բուլաղլար գյալեիմ (11)	Ավան-ավան դարլի դաղլար գյուլեիմ (11)
<i>Արաքսի ակունքներից եմ գալիս, –</i>	<i>Ավան-ավան ձյունոտ լեռներ եմ եկել</i>
Չայիի-չիման Սավուլ սուլար (8)	Չիչագ սըմբուլ գյուլ հալամշար (8)
<i>Սեզ ու խոտերը, խաղ ջրերը</i>	<i>Ծաղիկ, սմբուլ, վարդ...</i>
Բինգյոլի, Բինգյոլի:	Աշար յոյի Բինգյոլի:
Բինգյոլի, Բինգյոլի:	Բացում են ճամփան Բինգյոլի:

Աշուղական երգարվեստի հետ զուգահեռներ անցկացնելը շարունակելով նշենք, որ Կոմիտասի «Մշեցոց Բինգյոլ»-ն իրավացիորեն կարելի է անվանել «նվագարանային բնույթի վոկալ իմպրովիզացիա»⁴⁵, քանզի այն նախատեսում է ժողովրդական նվագարանի ուղեկցումով՝ միջնանվագ: Որպես կանոն, այդպիսի նվագարաններ էին քամանին, սազը, ուղը: Բինգյոլ աշուղական երգ-եղանակի մասին Գարեգին Լևոնյանը գրում է, որ «...երգելու ժամանակ տուներին հետևում է հորդորակ՝ մի նոր երկտողով կամ քառյակով, և այդ նույն հորդորակը կրկնում է բուն երգի ամեն մի տողից հետո, մինչև վերջը»⁴⁶: Որպես օրինակ Գ. Լևոնյանը բերում է Պ. Ղափանցու վերը նշված «Առավոտյան քաղցր և անուշ հովերը» բինգյոլին, որտեղ երգի ամեն տնից հետո երգվում է «Բացվի՛ր, բացվի՛ր, իմ կարմիր վարդ աննման» կրկնակը (ոեֆրեն):

«Բինգյոլ»-ի երաժշտական լեզվի առանձնահատկությունները

Կոմիտասի «Բինգյոլ»-ը սկսվում է վերին քառալարի բարձրակետից՝ «ց» հնչյունից և զարգանալու ընթացքում վարընթաց սահուն զարդուղորուն քայլերով իջնում է մեկ օկտավ և ավարտվում է ցածի «ց» վերջնաձայնով: Հիպոդորիական ձայնակարգում հատուկ դեր ունի կվարտային օժանդակ հեռակետը՝ «c»-ն:



⁴⁴ Նույն տեղում, էջ 91:

⁴⁵ Բնութագրումն Աթայանինն է (տե՛ս Կոմիտաս, ԵԺ, հ. 9, էջ 136):

⁴⁶ Տե՛ս Լևոնյան Գ., Երկեր, Երևան, 1963, էջ 271:

Կվարտային օժանդակ հենակետով և ցածր V աստիճանով էռլական կամ հիպոդորիական ձայնակարգերը ցայտուն կերպով արտահայտված են Կոմիտասի և Մ. Թումաճանի հարսանեկան երգերի «Ակնա շարերում»:

Առանձնահատուկ հմայք և հատուկ հնչերանգություն են հաղորդում ավտերացված աստիճանները՝ բնական և ցածր լոկրիական V աստիճանը (d, des). վերջինս դորիական VI-ի հետ երբեմն հարաբերվում է որպես մեծացրած սեկունդա (des – e), հաղորդելով հարմոնիկ երանգ.



Այս ձայնակարգն առավել բնորոշ է ակնեցիների երգամտածողությանը, և մեր կողմից պայմանական բնորոշվել է որպես «ակնա լադ»⁴⁷:

Որպես կանոն, ավտերացված աստիճաններն իջնում կամ բարձրանում են մեղեդիական գծի զարգացմանը համապատասխան, սակայն «Բինգյոլ»-ի դեպքում ավտերացիան ազատական է: Դորիական բարձր սեքստան (e) վառ


արտահայտված է ինչպես վերին հատվածում՝ , այնպես էլ ստորին՝ հիպոհատվածում. .

Իսկ բնական VI աստիճանը [es] դրսևորվում է միայն զարդանախշերում, ուստի հիմնական հնչյուն չէ:

Վստահաբար կարող ենք նշել, որ VI⁺ – VII – T վերընթաց այս քայլը (e – f – C) հայ ժողովրդական երգարվեստի հնագույն կորիզներից է: Այն պարտադիր առկա է գեղջկական երգաստեղծության առավել հին շերտերում՝ ծիսական (ավանդական թագվորագովքերում), վիպական և էպիկական երգերում:

Հայկական ժողովրդական երգաստեղծության մեջ նման սկզբունքով վերից վար, զարգանում են թերևս վիպական և էպիկական երգերը, որոնց կառուցվածքում իսկույն նշմարվում են շղթայված քառալարերը (տետրախորդ): Նմանատիպ երգերում ցայտուն դրսևորվում է հայկական ժողովրդական երգերի կվարտային կառուցվածքային սկզբունքը:

«Սասնա ծռեր» վեպի երգային հատված ⁴⁸



Բերված օրինակում ընդհանրությունները կոմիտասյան «Մշեցոց Բինգյոլ»-ի հետ ակնեղ են:

Ի տարբերություն սովորական գեղջկական ոչ մեծածավալ երգերի, որտեղ մեղեդին իր զարգացման ընթացքում հասնում է զագաթնակետի և վարընթաց շարժումով հանգուցալուծվում դեպի վերջնաձայն (T-տոնիկա), ապա Կոմիտասի «Մշեցոց Բինգյոլ»-ում զարգացման և հանգուցալուծման լայն

⁴⁷ Տե՛ս Տիգրանյան Մ., Հայոց ավանդական հարսանեկան գովքերը հնագույն ծեսի համատեքստում, Առենախոսություն (անտիպ), 2016, էջ 164-165:

⁴⁸ Կոմիտաս, ԵԺ, հ. 10, № 106, էջ 88:

սահմանները պայմանավորված են ժողովրդական երգարվեստի «լայն հորիզոններով», մեծ հնչյունաձևավալի նուրբ երաժշտական ճաշակով և բարձր կատարողական մակարդակով: «Մշեցոց Բինգյուլ»-ի բացառիկ լինելը ոչ միայն ստեղծագործական ձայնակարգային և ելեկտրային բովանդակության և ծավալուն կառուցվածք ունենալու հանգամանքն է, այլ նաև գրառողի՝ Կոմիտասի արձանագրման և հետագայում ճշգրտորեն արտաբերելու վարպետությունը, որը մեզ հնարավորություն է տալիս այդ խիստ արժեքավոր նմուշը բազմակողմանի և մանրակրկիտ ուսումնասիրել և վերլուծել:

Տեքստում ուշագրավ են կոմիտասյան ձայնարտաբերման եղանակին վերաբերող նշումներ. «խուլ», «հագագ», «բաց բերան»: Եթե «խուլ» և «բաց բերան» ասած ձայներանգները որոշ չափով պարզ են, ապա «հագագ»-ը պետք է հասկանալ «թոքերից օդը արտաշնչելու ձայնը»⁴⁹, որը շատ մոտ է հոգոցից արտաբերած «հ» հնչյունին: Յուրաքանչյուր ֆրագի գրառման նման մանրագին սկզբունքը ապահովում է երաժշտական դարձվածքի կատարման առանձնահատուկ ձևի ճշգրիտ արտաբերումը:

«Բինգյուլ»-ի մանրագիր հնչյունները, որոնք կարծես թե մեղեդու զարդարանք են և այլ դեպքերում Կոմիտասի կողմից համապատասխան նշաններով (օրինակ tr~~~~) կամ տերմիններով կնշվեին, «Բինգյուլ»-ում՝ հիմնական հնչյուններին հավասարազոր են:



Այդ պատճառով էլ դրանք գրվել են խոշոր հիմնական նոտաներով և հստակ տևողական արժեքներով: Ժողովրդական մեղեդիների կոմիտասյան գրանցման այս նոր ձևը, որով հետագայում գրառվեցին Ակնա երգերը (1892 թ.), աննախադեպ էր: XIX դ. վերջին տասնամյակին գրառած ժողովրդական ոչ մի երգ չէր գրանցվել նման մանրակրկիտ սկզբունքով: Այդ ժամանակաշրջանում ձայնագրություններ են կատարել Սահակ Ամատունին, Արշակ Բուստյանը, Ստեփան Դեմուրյանը, Քրիստափոր Կարա-Մուրզան, Նիկողայոս Տիգրանյանը ևն: Հայ երաժշտական ֆոլկլորագիտությունը դեռ «մանուկ» հասակում էր, ուստի նման վարպետությամբ ճշգրտորեն գրառում կատարելու տեխնիկան մասնագետներին դեռևս հայտնի չէր: Երաժշտական նյութը մանրամասն գրառելու և հետագայում վերծանելու հնարավորություն ֆոլկլորագետներն ունեցան միայն XX դ. երկրորդ կեսին, երբ ձայնագրման սարքերը տեխնիկապես հնարավորություն ունեցան հնչող նյութը դանդաղեցնել:

Ինչպես արդեն վերը նշվեց, Բինգյուն իր բանաստեղծություններում և երգերում գովերգել են աշուղներն ու գուսանները, և այս առումով բացառու-

⁴⁹ Մալխասեանց Ս., Հայերէն բացատրական բառարան, հ. 3, Երևան, 1944, էջ 7:

թյուն չէր գուսան⁵⁰ Շահենը.

Գիրքս (հատված)⁵¹

Բինգյոլ սարի կաթնաղբյուրից, մանանայից է գիրքս,
Աշո Սուլթան սուրբ Կարապետ, շարականից է գիրքս,
Մեր Խնուսա Բերդ քաղաքի, ծննդարանից է գիրքս,
Սասնա բարձր զով սարերի մով հովերից է գիրքս,
Մեր պապերի շիրիմների լուռ կանչերից է գիրքս,
Նոր կյանք առած Ղուկասյանի Կրասարից է գիրքս:

Շահենի հանրահայտ «Սասնա ծուռ» երգի հերոսուհի Էլինարը, որը հայ ժողովրդի հավաքական կերպարն է, զբոսնում է դրախտում՝ հազարաղբյուր ջրառատ Բինգյոլում.

«Սասնա ծուռ» (հատված)⁵²

Ասի՛ նագելիս, սիրելիս, ալ ես հագել ու զարդարվել,
Ասավ՛ սիրո՛ւն, ի՛մ հոգիս, քեզանով եմ մխիթարվել,
Ասի՛ ի՛մ թառլան Էլինար, ո՛ր ես գնում դու հազրվել,
Ասավ՛ Շահեն, քեզ եմ գալիս, ես Բինգյոլից՝ մայր Արագով⁵³:

Ինչպես իր հուշերում նշում է Շահենի դուստրը՝ երաժշտագետ Էլինար Շահենը (Էլինար Սարգսյան), հայրը ժամանակին գրառել է «բինգյոլի», որը գրանցել է որպես «Բինգյոլ-Սելֆինազ»⁵⁴: «Սելֆինազ»-ը բինգյոլի հատուկ տեսակ էր, որը կարելի է բնութագրել որպես օրորոցային: Այդ օրորը երգել է Շահենի մայրը՝ Զմրուխտը, Շահենի կրտսեր քույրը՝ Համասփյուղին օրորելիս⁵⁵:

Շահենի «Ուխտ եմ արել» երգում հայոց պատմական մի շարք վայրերի հետ մեկտեղ կրկին հիշատակվում է Բինգյոլը.

(հատված)

Պիպի տեսնեմ Տիգրանակերտ, մեր Սասունա սարերն ու բերդ.

⁵⁰ Հայ արդի երաժշտագիտության մեջ «գուսան»-«աշուղ» սահմանումները մասնագետների կողմից դեռ վերջնական բնութագրված չեն, և մենք այս հարցում առաջնորդվել ենք հեղինակի կողմից ընդունված, հաստատված և կյանքի օրոք հրապարակված ձևակերպումով:

⁵¹ **Շահեն. Գուսան Հայաստանի**, Երգերի ժողովածու, խմբ.՝ Է. Միրզոյան, Երևան, 1964, էջ 5-6:

⁵² Նույն տեղում, էջ 15:

⁵³ 1939-ին Մոսկվայում, Կրեմլում կայացած հայկական արվեստի տասնօրյակին Շահենը մեծ հաջողությամբ կատարել է իր այս հանրահայտ երգը՝ նվիրված «Սասունցի Դավիթ» էպոսի հազարամյակին: Որպես հեղինակ և որպես երգիչ արժանացել է «Պատվո Նշան» շքանշանի (տե՛ս **Էլինար Շահեն**, Շահենի հուշամատյանը, Երևան, 2011, էջ 134):

⁵⁴ 1928-ից մինչև կյանքի վերջին օրերը գուսան Շահենը հավաքագրել է ժողովրդական և աշուղական երգեր: Իր անձնական արխիվում, հարյուրավոր գրառված երգերի ցանկում №134-ով գրանցված է «Բինգյոլ» երգը և նշված՝ Սելֆինազ (մոր երգածներից) (տե՛ս **Էլինար Շահեն**, Շահենի հուշամատյանը, էջ 260, 265):

⁵⁵ 1920-ին Շահենի մոր և Ատլաս տատի աչքի առաջ թուրքերը փոքրիկ Համասփյուղին գլխատել են օրորոցում, որից հետո այդ օրորոցային երգը այլևս չի հնչել մոր՝ Զմրուխտի շուրթերից:

*Տեսնեմ Բասեն ու Բայազետը, Էրզրում ու Ղարս, Բինգյոլիս հետր.
Քաղեմ գազքեն լցնեմ կարաս, կալարվի իմ սրտի մուրագ
Ու ծովանա, դառնա Արագ, կարոտն առնեմ իմ Եփրատիս⁵⁶:*
Հիշատակենք նաև գուսան Շահենի հանրահայտ «Բինգյոլի ջեյրան»
երգը.

*Բինգյոլի պես, յար ջան, ունես հազար աղբյուր,
Կարոտ են քո ջրին, պապակ սրտիս ջուր փուր,
Կգա՞ արդյոք օրը, դրկես ինձ բարի լուր,
Ասես՝ Շահեն, արի քո Բինգյոլը սիրով:
Դու սիրո վառ կրակ ես, յար ջան,
Հուր ունես արևի պես, իմ Բինգյոլի ջեյրան⁵⁷:*

Ակամայից հիշում ես Հովհաննես Շիրազի տողերը.
Ինձ ասում են դու յար չունես, ինչպես չունեմ, յարն է հոգիս:
Մայր Արաքսին սնունդ տվող մեր Բինգյոլի սարն է հոգիս:

....

Սևանը քեզ, Վանա ծովն ինձ, էլ մի մնա հովին կարոտ:
Հայոց հույսի կոունկն եմ ես՝ Վանա երկրիս ծովին կարոտ:

...

Ամենասուրբ հայոց լեզուն, մեկ էլ Մասիս սարն է հոգիս,
Մի աչքը լույս, մի աչքն արցունք, իմ Հայաստան յարն է հոգիս:

«Բինգյոլ»-ը Ավ.Իսահակյանի արվեստում

Բինգյոլը հուզել է նաև Ավետիք Իսահակյանին: Իր առաջին «Բինգյոլ»
բանաստեղծությունը Իսահակյանը գրեց 1893 թ-ին Ավստրիայում⁵⁸:

Բինգյոլ⁵⁹

Շընկշընկալով հովն է փչում
Ձով Բինգյոլի լանջերից.
Գոչգոչալով ուղխն⁶⁰ է վազում
Խոր Բինգյոլի ձորերից:

Հորուտն-Մորուտն ծաղկանց ծովում
Բուրում է բույր ու երգեր.
Շուխիկ-Հուրիկ լըճի ծոցում
Լողանում է անընկեր:

Բյուրեղ լըճից ցողն է ելնում
Ծիածանի ժլպիտով.
Ծաղիկների ջինջ բողբոջում
Հանգ է առնում շողալով:
Զմրուխտ-երկրին հրեշտակին
Ողջունում է, փաղաքշում.
– «Ա՛խ, երնե՛կ քո մատաղ կյանքին,
Որ պիտ ծաղկի Բինգյոլում»:

⁵⁶ Շահեն. Գուսան Հայաստանի, էջ 8:

⁵⁷ Նույն տեղում:

⁵⁸ Այդ տարի տասնութամյա Ավետիքը մեկնեց Եվրոպա. Վիեննայի մարդաբանա-
կան թանգարանում աշխատելով և գիտական դասեր ունկնդրելով, կրթությունը շա-
րունակեց Գերմանիայում: Լայպցիգի համալսարանին կից գործում էր «Հայ ուսանող-
ների միություն»-ը, որին անդամագրվելով, երիտասարդ բանաստեղծը հայտնվեց հա-
րազատ միջավայրում՝ ձեռք բերելով նոր ընկերներ՝ Կարապետ Մելիք Օհանջանյա-
նին, Լևոն Շանթին, Գևորգ Չորեքչյանին ևն:

⁵⁹ Իսահակյան Ավ., Երկերի ժողովածու (վեց հատորով), հ. 1, Բանաստեղծություն-
ներ, Երևան, 1973, էջ 30-31:

⁶⁰ Ուղխ՝ հոսող ջուր (հին բանաստեղծական ձև):

Հրեշտակը երկրի կյանքից
Դյութված, ապշած լիովի,
Վայր է ընկնում աստղոտ երկնից –
Ընկնում գիրկը Բինգյոլի:

Փերուզ-երկինք հրեշտակին
Կարեկցում է, ցավակցում. –
– «Ա՛խ, ափսո՛ս քո անմահ կյանքին,
Որ փայլեց դրախտում...»

Վառ անուրջում ուղիսն է մնչում,
Ծփում են սեզ ու արոտ,
Բլբուլների հոյլքն է շնչում,
Շնչում է սե՛ր ու կարո՛տ:

Անո՛ւշ-անո՛շ հովն է փչում
Զով Բինգյոլի լանջերից,
Ոլոր-մոլոր ուղիսն է փախչում
Խոր Բինգյոլի ծորերից:

Վիեննա, 1893, հուլիսի 29

Իր երկրորդ «Բինգյոլ»-ը Ավ. Իսահակյանը գրեց 1941-ին հայրենիքում, որի վրա հյուսվեցին մեղեդիներ և որը սիրված երգեր դարձած՝ գրավեց բոլորի սրտերը:

Բինգյոլ⁶¹

Երբ բաց եղան գարնան կանաչ դռները,
Քնար դառան աղբյուրները Բինգյոլի.
Շարվեշարան անցան զուգված ուղտերը,
Յարս էլ գնաց յայլաները Բինգյոլի:

Պա՛ղ-պա՛ղ ջրեր, պապակ շուրթս չի բացվի,
Ծափ-ծափ ծաղկունք, լացող աչքս չի բացվի.
Դեռ չտեսած յարիս, – սիրտս չի բացվի,
Ինձ ի՛նչ, ավա՛ղ, բլբուլները Բինգյոլի:


Անգին յարիս լույս երեկոն կարոտ եմ,
Նազուկ մեջքին, ծով ծամերին կարոտ եմ.
Քաղցր լեզվին, անուշ հոտին կարոտ եմ,
Սև աչքերով էն եղնիկին Բինգյոլի:

Մոլորվել եմ, ճամփաներին ծանոթ չեմ,
Բյուր լճերին, գետ ու քարին ծանոթ չեմ,
Ես պանդուխտ եմ, էս տեղերին ծանոթ չեմ,
Քույրիկ, ասա, ո՞րն է ճամփան Բինգյոլի:

Երևան, 1941, հունիսի 19

Բինգյոլ⁶²

Հանգիստ - Չափավոր (♩ = 100)



Այս երգը 1950 թ-ին ձայնագրել է Վարդան Սամվելյանը. երաժշտու-
թյան հեղինակն էր Վիլյա Մարգարյանը⁶³:

⁶¹ Իսահակյան Ավ., Երկերի ժողովածու, հ. 1, էջ 356:

⁶² Սամվելյան Վ., Հայ ժողովրդական երգեր (Սովետական շրջան), Երևան, 1961, № 68, էջ 31:

⁶³ Վ. Մարգարյանը Հոկտեմբերյանի շրջանի (այժմ՝ Արմավիր) «Կոնսերվի գործա-
րանի» բանվորուհի էր: ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի կողմից 1950-ին դեպի Հոկ-

Իսահակյանի «Բինգյոլ»-ի ևս մեկ սիրված և ժողովրդին քաջ հայտնի եղանակ պատկանում է Շահեն Սարգսյանի՝ Գուսան Շահենի գրչին:

«Բինգյոլ»⁶⁴

Երբ բաց ե-ղան գար-նան կա-նաչ դըռ - նե-րը, քը-նար դա-ռան
աղ-բյուր-նե - րը Բին - գյո-լի, շար-վե-շա-րան ան - ցան գուգ-ված
ուղ-տե - րը, յարս էլ գը - նաց յայ - լա - նե - րը Բին - գյո - լի,
յարս էլ գը - նաց յայ - լա - նե - րը Բին - գյո - լի:

Գուսան Շահենի դստեր՝ Էլինար Սարգսյանի տեղեկության համաձայն՝ «Բինգյոլ»-ի այս մեղեդին ստեղծվել է 1943-1944 թթ. և երգի եղանակի համար հիմք է ծառայել այդ նույն տարիներին գրված «Թուխ մագերդ» երգի «ինչյունաշարն ու ռիթմիկան»⁶⁵: Այդ դեպքում անհասկանալի է, թե ինչու Գուսան Շահենի «Բինգյոլ»-ը, որը ժողովրդի սիրված երգերից էր, ժամանակին չի ընդգրկվել հեղինակի կյանքի օրոք հրատարակված երգերի և ոչ մի ժողովածուում⁶⁶, փոխարենը՝ որոշ երգարաններում այն ներկայացվել է որպես Ավ. Իսահակյանի խոսքերով ժողովրդական երգ: Մտածելու տեղիք է տալիս նաև այն փաստը, որ Շահենի «Բինգյոլ»-ի մեղեդին հաճախակի փոփոխվել է. օրինակ՝ Թ. Ալթունյանի ղեկավարած Հայկական ժողովրդական երգի-պարի անսամբլի և նրա մենակատար Լուսիկ Քոշյանի կատարմամբ հայտնի տարբերակը.


տեմբերյան կազմակերպած գիտարշավի ժամանակ երաժշտագետ Վ. Սամվելյանը հեղինակից գրի է առել այս երգը (տե՛ս Սամվելյան Վ., Հայ ժողովրդական երգեր, Երևան, 1961, էջ 119):

⁶⁴ Շահեն. Գուսան Հայաստանի, ժողովածու, խմբ.՝ Էլինար Շահեն, Երևան, 2006, էջ 184:

⁶⁵ Տե՛ս Էլինար Շահեն, Շահենի հուշամատյանը, էջ 266:

⁶⁶ Նկատի ունենք՝ Շահեն. Գուսան Հայաստանի, Երգերի ժողովածու, խմբ.՝ Է. Միրզոյան, Երևան, 1964; ինչպես նաև Շահեն. Գուսան Հայաստանի, Երգերի ժողովածու, խմբ.՝ Զ. Դարյան, Երևան, 1977:

Բինգյոլ (հատված)⁶⁷





Ինչպես կարելի է նկատել, այս օրինակի միջին մասը զգալիորեն տարբերվում է վերը նշված Գուսան Շահենի «Բինգյոլ»-ից, որը հրապարակվել է շատ ավելի ուշ՝ 2006-ին:

Մեղեդու տարբերակայնության նման երևույթն առավել բնորոշ է ժողովրդական՝ և ոչ հեղինակային երգի համար, որի դեպքում մեղեդին ստեղծողի՝ կոմպոզիտորի կողմից հստակ նոտագրված է:

Մեր որոնումների և վերլուծական աշխատանքների արդյունքում պարզվեց, որ Շահենի «Բինգյոլ»-ն այն «անբախտ» երգերից է, որը հանգամանքների բերումով կորցրել է իր հեղինակին, բայց ժողովրդի մեջ անչափ սիրվել, երգվել, տարածվել և դարձել է ժողովրդական: «Ժողովրդականություն» վայելելը գուցե և հեղինակի ստեղծագործության լավագույն գնահատականն է, սակայն Շահենի «Բինգյոլ»-ի դեպքում խնդիրը մի փոքր այլ է:

Գուսան Շահենի անձնական արխիվում մի փաստաթուղթ է պահվում. դեղնած թերթիկի վրա Շահենի ձեռքով մատիտով գրված է «Բինգյոլ» երգի հայատառ թուրքերեն տեքստը՝ թվագրված 1934 թ. հոկտեմբերի 20-ով, այսինքն՝ «Բինգյոլ»-ի մեղեդու գրվելուց (1943-1944թթ., ինչպես վկայել է հեղինակի դուստրը) դեռևս 10 տարի առաջ: Սա այն եզակի երգերից է, որտեղ նշված է նույնիսկ գրառման ժամը՝ 4²⁰: Ավելացնենք նաև, որ այդ «Բինգյոլ»-ն ունի ևս մի տարբերակ. երկրորդ օրինակը գրված է կապույտ թանաքով, իսկ վերնագրից անմիջապես հետո Շահենի ձեռքով նշված. «այս երգից է Ավետիք Իսահակյանը թարգմանել իր “Բինգյոլ-երգը”»:



Հայատառ թուրքերենով գրի առնված այս ստեղծագործության լեզուն

⁶⁷ Հայկական ժողովրդական երգեր և պարեր, Մշակմամբ Թաթուլ Ալթունյանի, Երևան, 1958, էջ 38:

թուրքական բարբառային ձևերի յուրահատուկ խառնուրդ է, որի բովանդակությունը հետևյալն է.

Բինգյուլ⁶⁸

Երբ ես եկա, սեյրան ելավ գբոսանքի (յարս),
Սուսան-սմբուլով զարդարված (ծածկված) սարը Բինգյուլի,
Գրիչ է պետք, որ խոր վիշտս գրի առնի,
Սրբազան ջուր, կյանքի ակունք Բինգյուլի:
Դրախտային բույրդ բերում են քամիները,
Գրիչն անկարող է նկարագրել վարդերը,
Կռունկները հիշել՝ վերադառնում են,
Յարս մնաց կանաչ սարում Բինգյուլի:

Ջեյրան-խանըմ (գեղեցկուհի), Բինգյուլի ճամփին ծանոթ չեմ,
Յարս մնաց կանաչ սեյրան սարումը,
Կռունկները դառնում են տուն, բայց ես ճամփին ծանոթ չեմ,
Խանում՝ որտե՞ղ է արդյոք ճամփան Բինգյուլի:

Հայֆիլիարմոնիայի երգի և պարի անսամբլի մեներգիչ լինելով (1937-1941 թթ.) Շահենը «Բինգյուլ»-ի այդ թուրքերեն տեքստը ցույց էր տվել Թաթուլ Ալթունյանին, որն էլ իր հերթին փոխանցել էր Գրողների միություն՝ տեքստը թուրքերենից հայերեն թարգմանելու նպատակով: Ինչպես կարելի է նկատել, «Բինգյուլ»-ի թուրքերեն տեքստը 11 վանկանի տաղաչափությամբ է (տե՛ս վերը): Շահենի արխիվային այս «Բինգյուլ»-ի (1934) և Ավ. Իսահակյանի հայտնի «Բինգյուլ»-ի (1941) միջև բովանդակային ընդհանրություններն ակնհայտ են.

[Խանում ներտա աջար յոլլի Բինգյուլի]
Բույրիկ, որտե՞ղ է արդյոք ճամփան Բինգյուլի:

տարբերությամբ գուցե՝ հայրենի Բինգյուլ վերադարձող «կռունկների երամը» (տեքստում՝ turnalar-տուրնալար), որն Իսահակյանի մոտ վերածվել է «շարվեշարան ուխտերի»: Իսահակյանի գրչին բնորոշ վարպետությամբ «Բինգյուլ»-ի թուրքերեն տեքստի այս գեղարվեստական թարգմանությունը ժողովրդի կողմից դարձավ սիրված և հարազատ, որի շուրջ էլ հյուսվեցին մեղեդիներ: Ուշագրավ է, որ Իսահակյանը պահպանել է թուրքերեն բանաստեղծական տեքստի 11 վանկանի տաղաչափությունը՝ այդքան հատուկ «Բինգյուլ»-ի ձևին:

Երբ բաց եղան գարնան կանաչ դռները, (11)
Քնար դարձան աղբյուրները Բինգյուլի... (11)

«Բինգյուլ»-ը կոմպոզիտորական արվեստում

Վերադառնալով Կոմիտասի «Մշեցոց Բինգյուլ»-ին նշենք, որ այն արտացոլում է գտել նաև ժամանակակից կոմպոզիտորական արվեստում: 2002 թ-ին կոմպոզիտոր Ջեննի Ասատրյանը մշակել է «Մշեցոց Բինգյուլ»-ը ֆլեյտա-

⁶⁸ Թուրքերենից հայերեն թարգմանությունը՝ Սվետլանա Սարգսյանի (թրքագետ) և Կարոլինա Սահակյանի (<< ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտաշխատող):

յի և դաշնամուրի համար, վերնագրելով այն «Pastorale»՝ հովվերգական⁶⁹: Ստեղծագործությունը սկսվում է ֆլեյտայի solo նախաբանով՝ հովվերգական կանչով, որից հետո դաշնամուրի նախանվագը պատրաստում է հիմնական մեղեդու (ֆլեյտա) հանդես գալը: Մշակման ընթացքում կոմիտասյան «Բինգյոլ»-ի մեղեդային գիծը չի խախտվել՝ բացառությամբ զարդանախշային որոշ հավելումների: Ինչպես արդեն վերը նշվեց, Ռ. Աթայանը «Մշեցոց Բինգյոլ»-ը բնութագրել է՝ նվագարանային բնույթի վոկալ իմպրովիզացիա և շարունակելով միտքը ավելացրել. «...որ գեղարվեստորեն միանգամայն արդարացի է դա կատարել նաև ժողովրդական նվագարաններով՝ սրինգով, բլուլով, շվիով...»⁷⁰: Կոմիտասի «Մշեցոց Բինգյոլ»-ի մշակումը ժամանակակից հայացք է, որտեղ կոմպոզիտորը ֆլեյտա նվագարանի տեխնիկական և հնչերանգային հնարավորությունները հնարավորինս չափով փորձել է մոտեցնել ժողովրդական գործիքների՝ սրինգի, բլուլի, շվիի հնչողությունը⁷¹:

2012 թ. կոմպոզիտոր Վաչե Շարաֆյանը գրեց իր չորրորդ դաշնամուրային տրիոն, որը նվիրեց իր սիրելի ուսուցիչ Էդվարդ Միրզոյանի հիշատակին և անվանեց «Continuations» (Շարունակություններ): Ստեղծագործության հիմքում կոմիտասյան մեղեդիներն էին, որի երկրորդ մասում (կառուցվածքը քառամաս է) կոմպոզիտորն օգտագործեց «Մշեցոց Բինգյոլ»-ը: Ստեղծագործության «կարգախոսն» էր Է. Միրզոյանի հայտնի ձևակերպումը. «Լավ է այն, ինչ լավ է շարունակվում»:

Եզրակացություն

Այսպիսով՝ մեկտեղելով հայ ժողովրդա-պրոֆեսիոնալ երգաստեղծության մեջ սիրված և մեծ տարածում ունեցած «Բինգյոլ»-ների մեզ հայտնի հնարավորինս բոլոր տարբերակները՝ փորձեցինք տալ այդ արժեքավոր երգատեսակի երաժշտական, բանաստեղծական, կերպարային, տաղաչափական և բովանդակային կառուցվածքի սահմանումները, ինչպես նաև տիպաբանական և ժանրային ընդհանրություններն ու առանձնահատկությունները, որն էլ թույլ տվեց գալ այն եզրահանգման, որ դարերի ընթացքում հայ ժողովրդա-պրոֆեսիոնալ՝ աշուղական երգարվեստում ձևավորվել և կայացել է երաժշտական և տաղաչափական հստակ կառուցվածք ու ձև ունեցող բինգյոլ տեսակը:

⁶⁹ Կոմպոզիտորն այն մշակել է որդու՝ անվանի ֆլեյտահար Նարեկ Ավագյանի համար: Վերջինիս կատարմամբ կոմիտասյան «Մշեցոց Բինգյոլ»-ի «Pastorale»-ը հնչել է Հայաստանում և արտերկրում:

⁷⁰ Տե՛ս Կոմիտաս, ԵԺ, հ. 9, էջ 136:

⁷¹ 2007-ին ավանդական, դասական և ավանգարդ արվեստի «Կամար Արտ» փառատոնի շրջանակներում Զ. Ասատրյանի այդ մշակումն արժանացել է հատուկ մրցանակի:

ЖАНР БИНГЁЛА И «МШЕЦОЦ БИНГЁЛ» КОМИТАСА

МАРИАННА ТИГРАНЯН

Бингёл, так же, как священная гора Арарат, озеро Ван, для каждого армянина является символом потерянной Родины и продолжает волновать и будоражить сердца. Во все времена его восхваляли народные сказители – ашуги, гусаны и поэты: Дживани, Шаэн, Аветик Исаакян, Ованнес Шираз и др. Среди многих «Бингёл»-ов особое место занимает запись Комитаса «Мушский Бингёл» («Մշեցոց Բինգյոլ»), который можно причислить к значимым этнографическим достижениям Комитаса. Это практически первый образец из дошедших до нас записей Комитаса, где указано точное время фиксации (13 октября, 1891 г.) и по определению видного ученого и комитасоведа Роберта Атаяна более уместно называть «балладой» или «песней-поэмой». Комитасовский «Бингёл» относится к произведениям инструментального типа с импровизационно развивающейся мелодикой, которые по структуре, ладовому строению и стилистике являются отдельным видом песенного творчества западных армян, имеющего непосредственное родство с протяжными песнями так называемых «алагезлу». По своему содержанию «Бингёл» – это восхваление природы, в которой упоминаются священная гора Бингёл, символическая армян река Аракс (здесь–Араз, Arax), историческая область Харберд, от которой дороги ведут к горе Бингёл и ее чистым родникам. Именно с Высокой Армении начинаются истоки четырех библейских рек – Евфрата, Тигра, Аракса и Чороха. Река Аракс – «самая армянская река», снабжающая водой области Великой Армении – Айрарат, Сюник, Арцах, Васпуракан. Ее во все времена называли Майр Аракс – Мать рек армянских. По историческим данным горный массив Бюракан – Бингел (в древности Серманц), входящий в состав горного хребта Таврос, еще в глубокой древности являлся культовой святыней. Армянский народ отождествлял эту местность с Эдемом, и не случайно, что культ этой святыни, передаваясь из поколения в поколение, сохранился и в эпоху христианства. В гласовой (ладовой) системе восточной ашугской культуры некоторые лады носят название определенной местности, например «Исфахан», «Шираз», «Шуштари», «Ирак», «Энзели», «Джабул» и т.д. Переняв эту традицию, армянские ашуги, исходя из особенностей своего поэтического текста, метроритмики и гласового строения мелодики, создали свои рифмованные обороты и строения, дав им армянские названия такие как «шаки», «шарки» и каковым является рассматриваемый нами жанр бингёла.

Ключевые слова – Комитас, Бингёл, «Мушский Бингёл», Никогайос Тигранян, ашуг Дживани, гусан Шаэн, алагёзлу.

THE GENER OF BINGYOLS AND KOMITAS' «MSHETSOTS BINGYOL»

MARIANNA TIGRANYAN

Like the Mount Ararat and the Lake Van, the image of Bingyol as a divine part of the lost fatherland has always been haunting Armenian minds; it has been praised by gusans and ashooghs and poets of all times (Jivani, Shahen, Avetik Isahakian, Hovhannes Shiraz).

In that row of Bingyols Komitas' "Mshetsots Bingyol" is a remarkably valuable sample of Armenian folk songwriting tradition, and qualifies for being classified among Komitas' most notable findings in folklore studies. It is the earliest dated recording to have persevered to our days (13 October 1891); Robert Atayan described Bingyol as a vocal improvisation, which is essentially instrumental, and pointed to its possible connections to lyrical and epic traditions of songs of the pilgrims, alagyozlus, and ashooghs.

The "Bingyol" is an ode to the Nature; it tells about mother River Araxes, historical Kharberd, the road to which takes to the 'crystal clear' sources of Bingyol. The four biblical rivers Tigris, Euphrates, Araxes, and Chorokh, originate from the Upper Armenia of the Armenian Highlands, a region that is believed to be the place where the Garden of Eden used to be located. The River Araxes originates in the Byurakn Mountains in the southern regions of Erzurum, where the meltdown of the thick layers of snow create endless number of minor lakes and sources (the name Byurakn literally means 'thousands of sources'), which sounds as Bingyol in Turkish. The area in the heart of the Armenian world, which has given birth to countless beliefs and legends has been praised, worshiped and sanctified since times immemorial.

The widely known Middle Eastern musical tradition of giving musical modes geographic names (Enzeli, Isfahan, Shiraz, Shushtari, etc.) has been borrowed by Armenian ashooghs, who gave Armenian names, such as Shaki (a village in Syunik, known for a spectacular waterfall in its territory), Sharki (a settlement), to certain metrical phrases having specific modal and versification features. Bingyol has been one of those metric phrases in the ashoogh vocal art.

Key words – Komitas, Bingyol, "Mshetsots Bingyol", Nikoghayos Tigranian, ashoogh Jivani, gusan Shahen, Alagyozlu.